ԵԴ1/1452/01/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 նոյեմբերի 2023 թվական քաղաք Երևան

Ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2023 թվականի սեպտեմբերի 29-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է թիվ 59109123 (ԵԴ1/1452/01/23) քրեական վարույթն ըստ մեղադրանքի՝ Արման Արամի Մկրտումյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Էդուարդ Հարությունի Հովսեփյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի՝ ՀՀ քրեական

օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, և 2023 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ ընդունվել է նույն դատարանի վարույթ:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 18-ին որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 30-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի նոյեմբերի 6-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2023 թվականի սեպտեմբերի 19-ի որոշմամբ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում հարուցված և մեկ վարույթում միացված թիվ 59100223 քրեական վարույթից մեղադրյալներ Արման Արամի Մկրտումյանի, Էդուարդ Հարությունի Հովսեփյանի և Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի վերաբերյալ անջատված թիվ 59109123 քրեական վարույթով նախաքննությունն իրականացվել և ավարտվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում:

6. Մեղադրյալ Արման Մկրտումյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և Էդուարդ Հովսեփյանին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով ներկայացված մեղադրանքներից հետևում է, որ վերջիններիս մեղսագրվող վերջին հանցանքները կատարվել են **2023 թվականի ապրիլի 1-ին**:

Մասնավորապես, Արման Մկրտումյանը, նախնական համաձայնության գալով հանցավոր կազմակերպության մասնակից Էդուարդ Հովսեփյանի հետ, խմբի կազմում 2023 թվականի ապրիլի 1-ին կատարել է սուտ մատնություն, այն է՝ իրավասու մարմնին՝ ՀՀ քննչական կոմիտեի ***Կոտայքի մարզային քննչական վարչությունում*** նույն օրը տված ցուցմունքով հայտնել է Աղասի Գևորգյանի կողմից Է.Հովսեփյանին հարվածներ հասցնելու, իր և Է.Հովսեփյանի նկատմամբ «Դիվա» գիշերային ակումբում բռնություն գործադրելու, սպանության սպառնալիք տալու հանցանքներ կատարելու վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ, իսկ Էդուարդ Հովսեփյանը 2023 թվականի ապրիլի 1-ին ոստիկանության ***Կոտայքի բաժնում*** տված հաղորդմամբ, հետագայում նաև ցուցմունքով հայտնել է Ա.Գևորգյանի կողմից իրեն հարվածներ հասցնելու, իր և Ա.Մկրտումյանի նկատմամբ «Դիվա» գիշերային ակումբում բռնություն գործադրելու, սպանության սպառնալիք տալու հանցանքներ կատարելու վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Անդրանիկ Վարդանի Արմանդարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով ներկայացված մեղադրանքից հետևում է, որ վերջինս անդամակցել է հանցավոր կազմակերպությանը, որի կազմում կառավարելով և ղեկավարելով հանցավոր կազմակերպության կողմից հանցագործություններ կատարելու նպատակով ստեղծված լրատվական գործունեությունը, կատարել է առանձնապես ծանր հանցագործություն, այն է՝ 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում, համապատասխան ծրագրային հավելվածների միջոցով մոնտաժել է (ձևափոխել) դատավոր Մերի Մոսինյանի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների լուսանկարները և դրանք 2023 թվականի հունիսի 11-ին ուղարկել է Վարդան Ղուկասյանին, որոնք Վ.Ղուկասյանի հետ ***հրապարակել են համացանցում***[1]:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 18-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Դ]ատարանը փաստում է, որ տարածքային ընդդատությունը սահմանող ՀՀ*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 12, թերթեր 255-263:

քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ որպես քրեական գործերի դատական տարածքը որոշելու հիմնական կողմնորոշիչ պայման հանդես է գալիս հանցանքի կատարման տարածքը:

Այսպես.

- Արման Արամի Մկրտումյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

- Արման Արամի Մկրտումյանը, ըստ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման, մասնակցել է Վարդան Ղուկասյանի կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանը,

- Վարդան Ղուկասյանի և Էդուարդ Հովսեփյանի հետ նախնական համաձայնությամբ, հանցավոր կազմակերպության կազմում Վարազդատ Միհրանյանից առանձնապես խոշոր չափերի շորթում կատարելու դիտավորությամբ, շանտաժի եղանակով՝ վերջինիս և նրան պատկանող «Դիվա» և «Քրեյզի» ակումբների աշխատակիցների մասին արատավորող, նրանց իրավունքներին և օրինական շահերին վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքի եղանակով 2023 թվականի մարտի 30-ին «Դիվա» գիշերային ակումբի անվտանգության աշխատակից Աղասի Սերյոժայի Գևորգյանին ներկայացրել է առանձնապես խոշոր չափի գույք հանձնելու պահանջ, որից հետո,

- Վարդան Յուրիկի Ղուկասյանի հանձնարարությամբ Արման Արամի Մկրտումյանը նախնական համաձայնության գալով հանցավոր կազմակերպության մասնակից Էդուարդ Հովսեփյանի հետ, խմբի կազմում 2023 թվականի ապրիլի 01-ին կատարել է սուտ մատնություն, այն է՝ իրավասու մարմնին՝ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում նույն օրը տված ցուցմունքով հայտնել է Աղասի Գևորգյանի կողմից Էդուարդ Հովսեփյանին հարվածներ հասցնելու, իր և Էդուարդ Հովսեփյանի նկատմամբ «Դիվա» գիշերային ակումբում բռնություն գործադրելու, սպանության սպառնալիք տալու հանցանքներ կատարելու վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համատեքստում, Դատարանն արձանագրում է, որ Արման Արամի Մկրտումյանը քրեական օրենքով չթույլատրված վերջին ենթադրյալ արարքը կատարել է 2023 թվականի ապրիլի 01-ին, այն է՝ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում ցուցմունքով հայտնել է Աղասի Գևորգյանի կողմից Էդուարդ Հովսեփյանին հարվածներ հասցնելու, իր և Էդուարդ Հովսեփյանի նկատմամբ «Դիվա» գիշերային ակումբում բռնություն գործադրելու, սպանության սպառնալիք տալու ենթադրյալ հանցանքներ կատարելու վերաբերյալ ակնհայտ կեղծ տեղեկություններ:

- Էդուարդ Հարությունի Հովսեփյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,

- Էդուարդ Հարությունի Հովսեփյանը ըստ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մասնակցել է Վարդան Ղուկասյանի կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանը,

- Վարդան Ղուկասյանի և Արման Մկրտումյանի հետ նախնական համաձայնությամբ, հանցավոր կազմակերպության կազմում Վարազդատ Միհրանյանից առանձնապես խոշոր չափերի շորթում կատարելու դիտավորությամբ, շանտաժի եղանակով՝ վերջինիս և նրան պատկանող «Դիվա» և «Քրեյզի» ակումբների աշխատակիցների մասին արատավորող, նրանց իրավունքներին և օրինական շահերին վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիքի եղանակով 2023 թվականի մարտի 30-ին «Դիվա» գիշերային ակումբի անվտանգության աշխատակից Աղասի Սերյոժայի Գևորգյանին ներկայացրել է առանձնապես խոշոր չափի գույք հանձնելու պահանջ, որից հետո,

- Վարդան Յուրիկի Ղուկասյանի հանձնարարությամբ Էդուարդ Հովսեփյանը նախնական համաձայնության գալով հանցավոր կազմակերպության մասնակից Արման Մկրտումյանի հետ, խմբի կազմում 2023 թվականի ապրիլի 01-ին կատարել է սուտ մատնություն, այն է՝ իրավասու մարմնին՝ ոստիկանության Կոտայքի բաժնում տված հաղորդմամբ, իսկ հետագայում նաև ցուցմունքով տվել է Աղասի

Գևորգյանի կողմից իր նկատմամբ ֆիզիկական և հոգեկան ներգործություն կիրառելու հանցանքներ կատարելու մասին սուտ տեղեկություններ:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համատեքստում, Դատարանն արձանագրում է, որ Էդուարդ Հարությունի Հովսեփյանը քրեական օրենքով չթույլատրված վերջին ենթադրյալ արարքը կատարել է 2023 թվականի ապրիլի 01-ին, այն է՝ ոստիկանության Կոտայքի բաժնում տված հաղորդմամբ, իսկ հետագայում նաև ցուցմունքով տվել է Աղասի Գևորգյանի կողմից իր նկատմամբ ֆիզիկական և հոգեկան ներգործություն կիրառելու ենթադրյալ հանցանքներ կատարելու մասին սուտ տեղեկություններ:

- Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով,

- Անդրանիկ Վարդանի Արմանդարյանը ըստ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մասնակցել է Վարդան Ղուկասյանի կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանը, հանցավոր կազմակերպության կազմում տեղեկություններ և միջոցներ է տրամադրել «Դոգ» մականվամբ Վարդան Ղուկասյանին,

- Անդրանիկ Վարդանի Արմանդարյանը ձեռք է բերել դատավոր Մերի Մոսինյանի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների լուսանկարները, 2023 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում, համապատասխան ծրագրային հավելվածների միջոցով մոնտաժել է /ձևափոխել/ լուսանկարները, դրանց վրա կատարել դատավորին ու նրա մերձավոր ազգականներին վերաբերող անպարկեշտ ու դատավորի անձը արատավորող գրառումներ և դրանք ուղարկել է Վարդան Ղուկասյանին:

Վերոգրյալ փաստական հանգամանքների համատեքստում, Դատարանն արձանագրում է, որ Անդրանիկ Վարդանի Արմանդարյանը քրեական օրենքով չթույլատրված վերջին ենթադրյալ արարքը կատարել է 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում, այն է՝ համապատասխան ծրագրային հավելվածների միջոցով մոնտաժել է /ձևափոխել/ դատավոր Մերի

Մոսինյանի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների լուսանկարները և դրանք ուղարկել է Վարդան Ղուկասյանին՝ ՀՀ Կոտայքի մարզի, Ջովունի գյուղից:

Մասնավորապես՝ ենթադրյալ վերջին հանցանքի կատարման վայրի մասին Դատարանի հետևությունները կայանում են ներքոգրյալ փաստական տվյալների համադրության արդյունքում.

- Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի բնակության վայր հանդիսացող Կոտայքի մարզ, Նաիրի, Ջովունի 24-րդ փողոցի թիվ 5-րդ տուն հասցեին կից հողատարածքում կառուցված տանը և դրան կից օժանդակ կառույցներում կատարված խուզարկության արձանագրությամբ, ըստ որի խուզարկության ընթացքում հայտնաբերվել և վերցվել է «Iphone 6», «Iphone X» և «Samsung Galaxy A 50» մոդելների բջջային հեռախոսները (տե՛ս հատոր 8-րդ, գ.թ. 63-68),

- Բնակարանի խուզարկության ընթացքում մասնակից Ա.Արմանդարյանի հայտարարությամբ, ըստ որի «Iphone 6» մոդելի բջջային հեռախոսը պատկանում է խուզարկության մասնակից Ա.Արմանդարյանին (տե՛ս հատոր 8-րդ, գ.թ. 63-68),

- Անդրանիկ Վարդանի Արմանդարյանին ձերբակալման վերաբերյալ կազմված արձանագրությամբ, ըստ որի վերջինս ձերբակալվել է Կոտայքի մարզի, Նաիրի, Ջովունի 27 փողոց, 5/1 տնից (տե՛ս հատոր 8-րդ, գ.թ. 69-70),

- Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի ձերբակալվածի դատավարական կարգավիճակով հարցաքննության արձանագրությամբ, որպիսի արձանագրության «11-րդ» կետում, որպես «Հեռախոսահամարը», նշված է «041-46-66-00» բջջային հեռախոսահամարը,

- Անդրանիկ Վարդանի Արմանադրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով հարուցված հանրային քրեական հետապնդման բովանդակությունից, ըստ որի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով ենթադրյալ հանցանքը կատարվել է 2023 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում,

- 041-46-66-00 բջջային հեռախոսահամարը սպասարկած ալեհավաք կայանների հասցեներով «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից տրված տեղեկությամբ առ այն, որ 041-46-66-00 բջջային հեռախոսահամարը 11.06.2023

թվականին ժամը 22:21-ին սպասարկվել է Կոտայքի մարզի, Զովունի գյուղի, 7-րդ թաղամասի, համար 6 կայանի կողմից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ փվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:

Այսպիսով՝ ելնելով վերոգրյալից, Դատարանը, նախ և առաջ փաստում է, որ Արման Արամի Մկրտումյանի, Էդուարդ Հարությունի Հովսեփյանի կողմից ենթադրյալ վերջին հանցանքները կատարվել են համապատասխանաբար՝ ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչությունում և ոստիկանության Կոտայքի բաժնում: Անդրադառնալով Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից կատարված ենթադրյալ վերջին հանցանքին, ապա սույն որոշման մեջ մատնանշված փաստական փվյալներն իրենց համակցությամբ վկայում են այն մասին, որ Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքը կատարվել է ՀՀ Կոտայքի մարզում: (…)»[2]:

8. Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ի որոշման համաձայն. *«(…) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթի առարկայական ընդդատությունը չի վիճարկվում, իսկ տարածքային ընդդատությունը սահմանող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի կարգավորումներից հետևում է, որ որպես քրեական գործերի դատական տարածքը որոշելու չափանիշ պետք է դիտարկել սույն վարույթով մեղադրյալներին առաջադրված մեղադրանքում վերջին ենթադրյալ հանցանքի կատարման տարածքը, Դատարանը նախ փաստում է, որ սույն քրեական վարույթով առաջադրված մեղադրանքի սահմաններում վերջին ենթադրյալ հանցանքը կատարվել է Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից՝ 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում: Մասնավորապես, ըստ առաջադրված մեղադրանքի՝ Անդրանիկ Վարդանի Արմանդարյանը թիվ 59100223 քրեական վարույթով ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 191-213:

հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով մեղադրյալ Արման Արամի Մկրտումյանի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքի ժամկետը երկարացնելու մասին վարույթն իրականացնող մարմնի միջնորդությունը ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Մերի Աղաբեկի Մոսինյանի կողմից 2023 թվականի հունիսի 11-ին բավարարելուց հետո, ձեռք է բերել դատավոր Մերի Մոսինյանի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների լուսանկարները, 2023 թվականի հունիսի 11-ին՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում, համապատասխան ծրագրային հավելվածների միջոցով մոնտաժել է /ձևափոխել/ լուսանկարները, դրանց վրա կատարել դատավորին ու նրա մերձավոր ազգականներին վերաբերող անպարկեշտ, գրառումներ, համապատասխան ծրագրային հավելվածների միջոցով մոնտաժել է /ձևափոխել/ դատավոր Մերի Մոսինյանի, ինչպես նաև նրա մերձավոր ազգականների լուսանկարները և դրանք ուղարկել է Վարդան Ղուկասյանին:

(…) Դատարանը, հետևաբար, արձանագրում է, որ ընդդատության հարցի լուծման տեսանկյունից հիմք պետք է ընդունել սույն քրեական վարույթով վերջին՝ Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից՝ 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում ենթադրյալ արարքի կատարման վայրը, որը, սակայն մեղադրական եզրակացությամբ հստակեցված չէ, որպիսի պայմաններում Դատարանը գտնում է, որ պետք է գործի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի չափանիշը: Այլ կերպ՝ քանի որ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել և մեղադրական եզրակացության մեջ ընդգրկել ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, հետևաբար մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, այսինքն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը:

Անդրադառնալով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից բջջային օպերատորներին կատարված հարցմանն ու ի պատասխան ստացված Յուքոմ ՓԲԸ թիվ 1239-23/ՔԿ

գրությանը՝ Դատարանը նախ, փաստում է, որ ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում նախնական դատալսումների փուլում ընդդատության հարցի պարզման համար առաջին ատյանի դատարանի կողմից նոր ապացույցներ ձեռք բերելու իրավասություն, այլ դատարանը պետք է առաջնորդվի բացառապես մեղադրական եզրակացության շրջանակներում մեղադրանքի ծավալում ներկայացված փաստերով: Հակառակ դեպքում կարող է առաջանալ ՀՀ քրեադատավարական օրենսդրությանը հակասող մի իրավիճակ, երբ դատարանի գործողությունների արդյունքում մեղադրանքի ծավալի՝ փաստական հանգամանքների մասով փոփոխության հարց բարձրանա, ինչը դատարանի իրավասության շրջանակներից դուրս է և նախաքննության մարմնի տիրույթում է գտնվում:

Ընդ որում, ի թիվս ՀՀ քրեական դատավարության օրենսդրության՝ մեղադրանքի ծավալին վերաբերող դրույթների, ընդդատության կանոնների վերլուծությունն նույնպես հիմք է տալիս եզրահանգելու, որ ենթադրյալ հանցանքների կատարման վայրի հստակեցումը ոչ թե դատարանի, այլ նախաքննության մարմնի կողմից մինչդատական վարույթի ընթացքում պարզման ենթակա հանգամանք է (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մաս), և այդ հանգամանքը պարզելու անհնարինության դեպքում դատարանը ոչ թե նոր ապացույցներ ձեռքբերելուն ուղղված գործողություններ պետք է կատարի, այլ պարտավոր է առաջնորդվել մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրի կանոնով:

Ավելին, Դատարանը գտնում է, որ եթե նույնիսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից բջջային օպերատորներին կատարած հարցման արդյունքում տվյալների ձեռքբերումը իրավաչափ դիտարկվի, միևնույն է, դրանով ինքնին չի հիմնավորում, որ տվյալ վարույթի ընթացքում Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից՝ 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում ենթադրյալ արարքի կատարման վայրը ՀՀ Կոտայքի մարզն է: Մասնավորապես, Դատարանի դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ենթադրյալ հանցանքը կատարվել է համապատասխան ծրագրային հավելվածի միջոցով լուսանկարներ

մոնտաժելով, դրանց վրա անպարկեշտ գրառումներ կատարելով և դրանք ուղարկելով, որոնք համացանցի միջոցով են կատարվել և առհասարակ չեն կարող ֆիքսվել տարածքը սպասարկող ալեհավաքների կողմից՝ բջջային հեռախոսների սպասարկման տարածքի պարզմամբ: Դատարանը գտնում է, որ համացանցային հանցագործությունների առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ, որպես կանոն, հնարավոր չի լինում պարզել այդ հանցագործությունների կատարման ստույգ վայրը: Դատարանը գտնում է, որ նախաքննական մարմնի կողմից մեղադրանքում ենթադրյալ հանցանքի վայրը չհստակեցնելը հենց այդ հանգամանքով էլ պայմանավորված կարող է լինել: Նշվածի կապակցությամբ հարկ է նաև փաստել, որ 2023թ. հոկտեմբերի 18-ի նախնական դատաքննության ընթացքում հանրային մեղադրողը նույնպես հայտնել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից «վերծանում» է կատարվել և պարզվել է, որ 041466600 բջջային հեռախոսահամարը շահագործվել է Կոտայքի մարզում, մինչդեռ հնարավոր չէ փաստել, որ արարքը հեռախոսազանգի հետ է կապված, քանի որ այն կատարվել է համացանցի միջոցով, հետևաբար հնարավոր չէ հստակ փաստել, թե ո՛ր դատարանի դատական տարածքում է կատարվել ենթադրյալ արարքը, հետևաբար քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին (հիմք՝ 18.10.2023թ. դատական նիստի ձայնագրության կրիչը):

Բացի այդ, Դատարանն արձանագրում է, որ բջջային հեռախոսահամարը սպասարկած ալեհավաք կայանների հասցեների վերաբերյալ տեղեկատվությունը Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի գտնվելու վայրի մասին ստույգ տեղեկատվություն չի հանդիսանում: Ուսումնասիրելով գրությունը՝ Դատարանը փաստում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից կատարված հարցմանն ի պատասխան ստացված «Յուքոմ» ՓԲԸ ընկերության թիվ 1239-23/ՔԿ գրությամբ հայտնվել է, որ 041466600 հեռախոսահամարը 11.06.2023 թվականին սպասարկվել է ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ Կոտայքի մարզի տարածքներում: Ընդ որում ժամը՝ 22:21-ին Կոտայքի մարզում սպասարկվելուց հետո որևէ տեղեկատվություն այդ հեռախոսահամարի

շահագործման վերաբերյալ առկա չէ, այսինքն հեռախոսազանգ չի կատարվել, մինչդեռ չի կարելի բացառել, որ անձը 11.06.2023 թ. ժամը 22:21-ից հետո գտնվել է Կոտայքի մարզի վարչական տարածքից դուրս՝ առանց բջջային հեռախոսահամարից հեռախոսազանգ կատարելու կամ ստանալու՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գրության ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ նշված հեռախոսահամարի սպասարկման տարածքները նույն օրվա ընթացքում մի քանի անգամ փոփոխվել են, այսինքն այն սպասարկվել է ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ Կոտայքի մարզի տարածքներում, իսկ սպասարկման տարածքների միջև ժամանակային տարբերությունները դրսևորվել են բավականին փոքր ընդհատումներով՝ ընդհուպ մինչև 1 րոպե, 5 րոպե և այլն: Հետևաբար, հեռախոսահամարը շահագործած անձը ժամը 22:21-ից հետո՝ մինչև 11:33-ն ընկած ժամանակահատվածում, կարող էր կարճ ժամանակ անց Կոտայքի մարզից կրկին տեղափոխված լինել Երևան քաղաք: Ավելին, Դատարանը գտնում է, որ չի հիմնավորվել նաև այն հանգամանքը, որ 11.06.2023թ.-ին ամբողջ օրը տվյալ բջջային հեռախոսահամարը փաստացի շահագործվել է միայն Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ թիվ 1239-23/ՔԿ գրության տեղեկատվությունն, հատկապես այլ ուղղակի ապացույցների բացակայության պայմաններում, չի կարող հիմք հանդիսանալ Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից ենթադրյալ հանցանքի կատարման վայրի մասին հիմնավորված հետևություն անելու համար: Ինչ վերաբերում է Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի բնակության վայրում կատարված խուզարկության և Անդրանիկ Վարդանի Արմանդարյանին ձերբակալելու արձանագրությունների վերաբերյալ դատողություններին, ապա հարկ է փաստել, որ այդ գործողությունները կատարվել են ենթադրյալ հանցանքի կատարումից մոտ երկու օր անց՝ 2023թ. հունիսի 13-ին (հիմք՝ հատոր 8, վ.թ. 63-70), ուստի ողջամիտ չէ դրանց հիման վրա հանցանքի կատարման ստույգ վայրի վերաբերյալ հետևություն կատարելը:

Վերոգրյալ վերլուծությունների համատեքստում, Դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Երևան քաղաքի առաջին ատյանի

ընդհանուր իրավասության քրեական դատարանի 18.10.2023թ.՝ քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին որոշմանը՝ արձանագրելով, որ Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի կողմից 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում քրեական օրենքով չթույլատրված վերջին ենթադրյալ արարքի կատարման վայրը մինչդատական վարույթում պարզված չլինելու պայմաններում, թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը, այսինքն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը: (…)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (…) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 14, թերթեր 22-48:

իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բիտում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[4]*:*

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

3. Եթե մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված՝ ենթադրյալ հանցանքների կատարման վայրը, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը: (…)»

Նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Եթե մինչդատական վարույթում միացվել են առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարաններին ընդդատյա երկու կամ ավելի վարույթներ, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը»:*

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական վարույթների ընդդատության ընդհանուր այն կանոնից, որ տարածքային ընդդատությունը որոշվում է վերջին հանցանքի կատարման վայրով, օրենսդիրը նախատեսել է բացառություն այն դեպքում, երբ մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ենթադրյալ հանցանքների կատարման վայրը: Տվյալ պարագայում, մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- քրեական վարույթով ենթադրաբար կատարված վերջին հանցանքը՝ Ա.Արմանդարյանի կողմից դատավորի և նրա մերձավոր ազգականների վերաբերյալ արատավորող տեղեկությունները **հանցավոր կազմակերպության կազմում համացանցում հրապարակելն է**[5]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, հիմք ընդունելով նախնական դատալսումների ընթացքում «ՅՈՒՔՈՄ» ՓԲ ընկերության կողմից ստացված գրությունն առ այն, որ մեղադրյալ Ա.Արմանդարյանին պատկանող բջջային հեռախոսահամարը 2023 թվականի

[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

հունիսի 11-ին ժամը 22:21-ին սպասարկվել է Կոտայքի մարզի Ջովունի գյուղի 7-րդ թաղամասի համար 6 կայանի կողմից՝ արձանագրել է, որ քրեական օրենքով չթույլատրված վերջին ենթադրյալ հանցանքը կատարվել է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում[6]:

- Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, չհամաձայնվելով նշված դիրքորոշման հետ, նշել է, որ ընդդատության հարցի լուծման տեսանկյունից հիմք պետք է ընդունվի սույն քրեական վարույթով վերջին՝ Ա.Արմանդարյանի կողմից՝ 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում ենթադրյալ հանցանքի կատարման վայրը, որը, սակայն, մինչդատական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել, հետևաբար մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը[7]:

14. Նախորդ կետում վկայակոչված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-12-րդ կետերում մեջբերված իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է արձանագրել, որ սույն վարույթով վերջին ենթադրյալ հանցանքն ավարտվել է ոչ թե Ա.Արմանդարյանի կողմից 2023 թվականի հունիսի 11-ի՝ ժամը 21:45-ից մինչև 23:33-ի սահմաններում կատարված գործողություններով, այլ դրանից հետո տեղեկությունները հանցավոր կազմակերպության կազմում համացանցում հրապարակելով, որի կատարման վայրը պարզված չէ: Հետևաբար, սույն վարույթի տարածքային ընդդատությունը որոշելիս պետք է հիմք ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը՝ համաձայն որի՝ մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում է գտնվում մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն վարույթով մինչդատական վարույթն իրականացրած նախաքննության մարմնի նստավայրը գտնվում է Երևան քաղաքում՝ գտնում եմ, որ թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթն ընդդատյա է

---

[6] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[7] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

15. Միևնույն ժամանակ, ընդունելի են Ա.Արմանդարյանի բնակության վայրում կատարված խուզարկության և նրան ձերբակալելու արձանագրությունների վերաբերյալ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատողություններն առ այն, որ նշված գործողությունները սույն վարույթի ընդդատության հարցը որոշելիս էական նշանակություն ունենալ չեն կարող:

16. Վերոշարադրյալի հիման վրա գտնում եմ, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթն ընդդատյա է Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր չէ:

Հետևաբար, սույն վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ1/1452/01/23 քրեական վարույթը՝ Արման Արամի Մկրտումյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Էդուարդ Հարությունի Հովսեփյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 476-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և Անդրանիկ Վարդանի Արմանդարյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 1-ին մասով, 490-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ